

## Գավառում պարզեատրվեցին ՀՀ հինգերորդ բանակային կորպուսի շուրջ 100 զինձառայողներ

16.09.2015

Բանակ-ծնող կապն ամրապնդելու նպատակով, Գեղարքունիքի մարզում արդեն երկրորդ անգամ կազմակերպվում է հանդիպում Հայոց բանակում ծառայող ծնունդով Գեղարքունիքի մարզը ներկայացնող զինձառայողների, նրանց ծնողների, հարազատների և ՀՀ հինգերորդ բանակային կորպուսի հրամանատար կազմի հետ: Ինչպես տեղեկացրեց փոխգնդապետ Արթուր Մուսայելյանը, հանդիպման նպատակն է առավել ամրապնդել բանակ-հասարակություն կապը եւ խրախուսել ձառայության մեջ աչքի ընկած զինվորներին: Նա նաեւ նշեց, որ նախաձեռնությունը ՀՀ պաշտպանության նախարարությանն է՝ ի դեմս նախարար Մեյրան Օհանյանի: ՀՀ հինգերորդ բանակային կորպուսի գործառնաբերում ձառայող շուրջ 100 ժամկետային զինվորներ եւ ծնողներ պարզեատրվեցին ՀՀ ՊՆ շնորհակալագրերով, պատվոգրերով, կրծքանշաններով: Հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ Գավառ քաղաքի մշակույթի տանը: Զինվորներին ուղեկացում էր նաեւ Վոլոդյա սարկավազ Նաջարյանը, ով նրանց հետ միասին ձառայում է Հայոց բանակում: Միջոցառումն սկսվեց տերունական աղոթքով, հինգերորդ կորպուսի դրոշի բեմ բարձրացնելով եւ օրհներգով: <<Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ ինչ-որ շրջանում մարտահրավերներ են ի հայտ գալիս, որով ապրել-մեռնելու ճակատագիր է որոշվում: Ի տարբերություն այլ ժողովուրդների՝ մեր ազգը դեմ առ դեմ է կանգնում փորձությունների առջեւ: Մենք բազում հաղթանակներ ենք կերտել եւ մեր հաղթանակները շարունակական են, իսկ այս պահին մեր առջեւ նստած զինվորները մեր ապագա հաղթանակ կերտողներն են: Մեր գերագույն նպատակը համախմբվելն ու համաժողովրդական բանակի կայացմանը նպաստելն է: Հայկական ուժերը պետ է հազարապատկվեն եւ այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել մեր ապագա սերնդի դաստիարակությանը: Հայրենիքը սկսվում է ընտանիքից եւ կարելու չէ, թե զինվորը Հայրենիքի որ հատվածը կպաշտպանի, նա պետք է մտածի, որ իր տունն էլ պաշտպանում է մեկ այլ զինվոր>>,- իր ելույթում ասաց ՀՀ հինգերորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Իշխան Մաթեոսյանը: Զեկույցով հանդես եկավ նաեւ Գեղարքունիքի մերգպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Նա նշեց, որ գործառնաբերության, պետական այրերի հետ բազում հանդիպումների ժամանակ միշտ խոսվել է մեր տղաների օրինակելի վարքի, լավ ձառայության մասին եւ պատահական չէ, որ այսօր պարզեատրվում են միայն լավագույնները: Ելույթներով հանդես եկան նաեւ ՀՀ հինգերորդ բանակային կորպուսի գործառնաբերի հրամանատարներն ու զինձառայողների ծնողները: Միջոցառման ժամանակ հնչեց նաեւ հայկական երգն ու պարը, իսկ վերջում ծնողների բարձրացրած հարցերին տրվեցին համարժեք պատասխաններ: